այնտեղ, գերեզմանում, ես էլ երկնքում կը լսեմ քո խօսքերը եւ կ'օրհնեմ քեզ»:

Աբովեան հաւատարիմ է մնում ինքն իրեն եւ իր խօսքին: «Նա երբեք մտքից չէ հանում եւ այս յորդորները: Ձեռք է բերում գերմանական կրթութիւն ա՛յնպէս, ինչպէս հազիւ թէ մի ուրիշ ասիացի մարդ: Դրա հետ մէկտեղ՝ նա հաւատարիմ է մնում եւ իր հաւատին, իր եկեղեցուն» (I. 213–214):

Այս խօսքերը լիովին համապատասխանում են իրականութեան: Ծանօթ է նաեւ, թէ Դորպատից վերադարձած Աբովեանը ի՛նչ ընդունելութիւն է գտնում Էջմիածնում:

Աբովեանի բնաւորութեան, նրա նկարագրի մասին հետեւեալ տողերն ենք գտնում Հաքստաուզէնի մօտ.—

«Աբովեանը այն ազնիւ, ճշմարիտ եւ մըտացի բնութիւններից էր, որպիսիք մեզ շատ հազուադէ՛պ անգամ պատահում են կեանքի մէջ: Նա վառ հայրենասէր էր, սիրում էր իր հայրենիքը» (I. 180):

Մի ուրիշ տեղ (I. 305) Հաքստհաուզէն Աբովեանին անուանում է «խոշոր տաղանդ»:

Եւրոպացի ճամբորդը կարողացել էր թափանցել Աբովեանի հոգու խորքը, հասկանալ նրա էութիւնը: Աբովեան գործով էլ ցոյց էր տուել, որ արժանի է նման գնահատականի:

Թէ Աբովեան որպիսի թանկագին ծառայութիւններ է մատուցել իրեն՝ Հաքստհաուզէնին, վկայում է վերջինս ինքը իր աշխատութեան մէջ, բազմաթիւ անգամներ: Այդ վկայութիւնները ամփոփւում են նրա հետեւեալ խօսքի մէջ.

«Ցետագայ հատուածների (այսինքն՝ Հայաստանի եւ հայ ժողովրդի մասին առաջ բերած տեղեկութեանց) մեծագոյն մասը ես պարտական եմ նրան, Աբովեանին, ապա նաեւ՝ իմ սեփական դիտողութիւններին, որոնք նմանապէս մէկ մասով նրանի՛ց են ստացել իրենց մղումը» (I. 180):

Մի երկու մանրամասներ եւս:

Մի երեկոյ (25 օգոստոս 1843), երբ Հաքստհաուզէնն Աբովեանի հետ միասին այցելում են Երեւանի բարձրադիր եկեղեցին ու նրա մօտի վանքը, այդ տեղից էլ դիտում դէպի Արարատ բացուող «սքանչելի տեսարանը» երկու բարեկամները մինչեւ երեկոյ իրար հետ են լինում, խօսակցութեան բռնուած:

«Այդ ու յաջորդ օրերին ես ձեռք բերի, ասում է գերման ուղեւորը, ահագին թուով նօթեր՝ հայ ժողովուրդի կենցաղավարութեան, նրա բարքերի ու սովորութեանց, առանձնայատկութիւնների եւ ձգտումների մասին: Այդ ձեւով ես կարողացայ ստանալ մի պարզ հայեացք այդ ժողովուրդի ներքին կեանքի մասին — այնպէս ու ա՛յն չափով, որ կարծես թէ ես ամիսներո՛վ ապրած լինէի նրա մէջ... Որովհետեւ Աբովեան նկատեց շուտով, որ ես առհասարակ ժողովուրդների կեանքը սիրո՛վ եմ ուսումնասիրում, ուստի հաղորդեց ինձ անկեղծութեամբ ամէ՛ն ինչ, այո՛, մինչեւ անգամ ինքը սկսեց հրաւիրել իմ ուշադրութիւնը շատ բաների վրայ: Եւ որովհետեւ նա չորս տարի շարունակ գերմանացիների մէջ էր ապրել Դորպատում, ու պա՛րզ էին նրա համար այդ երկու ժողովուրդների կեանքում եղած նման եւ տարբեր գծերը, ուստի բաւակա՛ն էր մի հարց, բաւակա՛ն էր իմ կողմից մի մղում, որ նրա մէջ ծագէին ինձ հաղորդելիք զանազան մտքեր ու յիշողութիւններ» (I. 179-180):

Աբովեանի «Պատանեկան յիշողութիւնների» մասին, որոնցից այնչա՛փ առատօրէն օգտուել է Հաքստհաուզէն, (տես՝ I. 194, 203 եւայլն), եւ որոնց մասին մի քանի անգամ խօսք է անում նա, հետեւեալ մանրամասնութիւնն է տալիս (I. 191, ծանօթութիւն).—

«Աբովեանը Դորպատում եղած միջոցին մի տետրի մէջ գրի էր առել, իր պատանեկան յիշողութիւնները, որոնք հայ ժողովրդի կեանքի մասին բազմաթիւ հետաքրքրական գծեր էին պարունակում: Աբովեան ինձ նուիրեց այդ տետրը՝ օգտուելու համար նրանից»:

Ահա այդ տետրից է, որ Հաքստհաուզէն բառացիօրէն, (I. 191 եւայլն) կամ բովանդակութիւնը միայն տալով, առաջ է բերում բազմաթիւ հատուածներ ու զանազան կտորներ հայ ժողովրդական բանահիւսութիւնից ու սովորոյթներից: Դրա համար է, որ Հայաստանի եւ հայ ժողովրդի մասին Հաքստհաուզէնի գրքի մէջ առաջ բերուած հատուածների հեղինակ համարել կարող ենք, ամենայն իրաւունքով, որչափ գերման ականաւոր ճամ-